N: 7/n 212
«03» 07 2014

N-50006-13ce
03.07.2014թ.

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ

# ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

2014թ. հունիսի 27-ին տեղի ունեցավ «Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ժողովը:

Ընկերության թվով 20452 բաժնետոմս ունեցող անդամներից տարեկան ժողովին մասնակցում էին թվով 15205 բաժնետոմս ունեցող անդամներ /բաժնետերեր, որոնց պատկանում է բաժանորդագրված բաժնետոմսերի 74,3 %-ը/:

**«Արփա-Սևան» ԲԲԸ**
**Տարեկան ժողովի կողմից ընդունված էական փաստեր և տեղեկություններ ներառող որոշումները**

## 1.Շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման վերաբերյալ

«Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ժողովը որոշում ընդունեց՝

- Հաստատել 01.07.2013թ. – 01.07.2014թ. ընկած ժամանակահատվածում գլխավոր տնօրենի կողմից նյութական օգնության և սոցիալական ուղղվածության, բարեգործական, ինչպես նաև այլ նպատակների օգտագործման համար կատարված 74 819 946 (յոթանասունչորս միլիոն ութ հարյուր տասնինը հազար ինը հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ ծախսերը:
  2013 թվականի 671 633 000 (վեց հարյուր յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից՝
- 102 260 000 (հարյուր երկու միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ օգտագործել շահութաբաժինների վճարման համար:
- 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը թողնել Ընկերության գլխավոր տնօրենի տրամադրության տակ, մինչև հաջորդ ընդհանուր ժողովը ընկած ժամանակահատվածում, նյութական օգնության և սոցիալական ուղղվածության, բարեգործական, ինչպես նաև այլ նպատակների օգտագործման համար:
- 519 373 000 (հինգ հարյուր տասնինը միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար ) ՀՀ դրամը կուտակել ընկերության կուտակված շահույթի ֆոնդում և անհրաժեշտության դեպքում օգտագործել հիմնական միջոցների ձեռք բերման և այլ կարիքների համար:



ՀՀ, ք. Երևան 0012, Վ. Վաղարշյան 20
հեռ.՝ (374 10) 26 08 62, ֆաքս՝ (374 10) 26 11 00
info@arpa-sevan.am
20 V. Vagharshyan str., Yerevan 0012, RA
tel.: (374 10) 26 08 62, fax (374 10) 26 11 00
www.arpa-sevan.am

ISO 9001 BUREAU VERITAS Certification N. UA226813

- 2001թ.-մինչև 2012թ. չվճարված շահութաբաժինների գումարների վճարման ժամկետը երկարաձգել մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:
- 2013թ. տարեկան շահութաբաժինների վճարումը սկսել որոշման ընդունման պահից 10 օր անց և ավարտել մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահութաբաժինը կազմում է՝ 5000 դրամ:

2.Կառավարման մարմինների անդամների փոփոխության վերաբերյալ

Բաժնետերերի տարեկան ժողովում վերստուգող հանձնաժողովի կազմում ընտրվեցին նախորդ կազմի նույն անդամները, որոնց մասին ներկայացված տվյալներում փոփոխություններ չեն եղել:

| հ/հ | Ազգանուն անուն հայրանուն | Ընկերությունում զբաղեցրածպաշտոնը | Բնակության (հաշվառման)վայրը | Բաժնետոմսերի քանակը |
|---|---|---|---|---|
| 1. | Պետրոսյան Գագիկ Նորայրի | Տեղամասի պետ | ք.Երևան, Մաշտոցի պող. 40ա, բն.18 | 0 |
| 2. | Եղիյան Սպարտակ Սերյոժայի | Իրավաբանական ԲՊ | ք.Երևան, Կոմիտասի պող.19/8, բն.16 | 144 |
| 3. | Գևորգյան Նարինե Պարույրի | հաշվապահ | ք.Երևան, Նորագավիթ, 8-րդ կմ | 2 |

Գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյան

կատարող Զորիկ Վարդանյան
հեռ.(374 10) 26-11-90